

յառաջադիմութեան և կոմ այլ աստուածահաճոյ ազգային հաստատութեանց առաջովութեան համար որոնցից միմիայն պէտքէ յառաջանայ անշուշտ Ազգին հոգեկան և մարմնական երջանկութիւնը:

* *

Նողայսք քաղաքի բարեկը . Ապղոր քահանայն ինդրումէ . Արարատի միջոցաւ յայտնել նոյն քաղաքի հոյ հաստրակութեան լիարերան շնորհակալութիւնը Մոռկուայտակ վուեմ . և Եղղասէր Յովհաննու Յովնանեանց որ ազգասիրական կարեկցութեամբ նողայսք քաղաքի հայկական Եկեղեցւոյն նուիրել է հասարակ քարերով զարդարուած մի պատուական Սաղաւարդ մի վայելուչ վական և մի գօտի ի յիշատակ հոդաց իւր բարեպաշտուչի Մտրիամ ամուսնոյ և որդւոցն Ստեփաննոսի և Յովհաննու:

Նոյնպէս և Նողայսք քաղաքի բնակչուչի այրի Աննայի Գէորգեան Քէշիշեանց որ իւր եկեղեցասիրական ջերմեռանդութեամբ նուիրել է նոյն քաղաքի եկեղեցւոյն մի հատ եօթնաջահեան աշտանակ ի յիշատակ հոգեոյ իւր հանգուցեալ ամուսնոյ հին — Խրիմեցի Մանուկի Գէշիշեանց Օքնեալ լինիւ:

* *

Ազգիս Աեհամփառ Հայրապետը բարեհաճեցաւ Մայր Աթոռոցը Գէորգեան Ճեմարանի լսարաններում զասախօսելի առարկայից կարզը մոցնել և բժշկական բնական առբանական ուսուցուութեան նկատի ունենալով՝ որ Գէորգեան Ճեմարանի նոյտատակն է առաւելապէս պատրաստել Հայ ազգի համար արժանաւոր ուսուցիչներ և Եկեղեցականներ, հասկանալի է թէ՛ ոքքան օգտակար և նպատակայարմար է մեր Ազգախնամ Հայրապետի այս կարգադրութիւնը:

* *

Հոկտ. 11ին Կ. Պօլսեցի մեծ. Գարրիել Էֆէնտին Նորատունկեան այցելով Մայր Աթոռոցս Գէորգեան Ճեմարանին նուիրեց յօգուտ Նորահնչ հատ օսմանեան լեռ ոսկի, որի մասին յայտնում ենք Խորին շնորհակալութիւնն:

* *

Ազգիս Աեհամփառ Հայրապետը տարւոյ Ցուիսի 4/ից մինչեւ հոկտեմբերի 44 բարեհանց տալ հետեւեալ կոնդակները:

Կոնդակ Հին — Նախիջևանու երկսեռ հայ դպրոցաց նորընտիր հոգաբարձուաց անունով, որով հաստատումէ հոգաբարձութեան պաշտօնի մէջ բարեկ. Մկրտիչ քահանայն Տ. Ապրանեան, պ. պ. Աբդարն Օրբելիան, Աբտիմ - բէկն Սարտիսանբէկեանց, Բաղալ Մելիք - Եյնաթեանց, Աղէբասնդր Տ. Գասպարեան եւ Կոստանդին Օհանեանց, տալով նոցա օգնական պ. Պ. Աբրահամն Տ. Ցակովիեանց, Արդիս Տ. Մկրտիչնեան եւ Ցովհաննէսն Աւետիքեանց: Ցուիս 1, թ. 343:

Կոնդակ օրինութեան եւ գոհունակութեան Երեւանայ Հայոց Ա. Գայիանեան օրինութեան միջնակարգ ուսումնաբանի Հոգաբարձունեաց եւ Տեսչի անունով, նոյն ուսումնաբանի աշակերտներից Թաւշեայ կերպասի մետաքսաթել դործուած ճեմարանանկար դորդի համար, որը իւրիւանց կողմից նուիրեցին Շարին Վեհափառութեան:

Յուլիսի 4 թ. 532:

Կոնդակ օրինութեան եւ գոհունակութեան Ալորպատականի վիճակի Հայոց Թեմական Առաջնորդ Գրիգոր Արքեպիսկոպոսի Մուշեղնանց, նորա Հայ դպրոցների զարգացման եւ յարատեւութեան մասին ունեցած ջանացողութեան եւ հոգացողութեան համար: Յուլիսի 25 թ. 544:

Գրութիւն Որուսաց ներքին դործոց նախարարի—Վահեմ. Մակովի անունով, որով պատասխանելով Նորա դրութեանը փոխանակումէ իւր շնորհակալութիւնը Նոր—Նախիջևանի Հայոց նորաբանալի Թեմ. դպրանոցի կանոնադրութեան հիմնական ծրագիրը հաստատելու համար: Օգոստոսի 4 թ. 554:

Կոնդակ Շուշուայ Հայոց Թեմ. դպրանոցի Հոգաբարձութեան անունով, որով հաստատումէ պ. Սեներակ Մատինիանցին նոյն դպրանոցի տեսչական պաշտօնի մէջ; Օգոստոսի 29. թ. 562:

Կոնդակ պ. պ. Մկրտիչ Մուրբատիկեանցին, Նախապետ Յակովիանցին, Թովակիմ Մովսիսեանցին եւ Արքահամ Պապութեանցին Երեւանայ գաւառակի Քանաքեռ զիւղի Հայոց ծխական դպրոցի նոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելու համար: Օգոստոսի 29. թ. 563:

Կոնդակ պ. պ. Առաքել Ստեփանեանին, Առևտամ Իրգայիանին եւ Օհան Առաքելեանին Հին—Նախիջևանու Թմբուկ զիւղի Հայոց ծխական դպրոցի նոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելու համար: Օգոստոսի 29. թ. 564:

Կոնդակ պ. պ. Յովհաննէս Յակովիանին, Մկրտիչ մելիք - Բարայեանին եւ Յունիաթ Մնացականեանին Հ. Նախիջևանու Քիւլթէփէ զիւղի Հայոց ծխական դպրոցի նոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելու համար: Օգոստոսի 29. թ. 565:

Կոնդակ պ. պ. Պարսամ Տ. Յովհաննէսիսեանին, Աւետիք Լյվաղեանին, Սարգիս Խաչատրեանին եւ Ստեփան Մովսէսեանին Հ. Նախիջևանու Եարմշայ զիւղի Հայոց ծխական դպրոցի նոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելու համար: Օգոստոսի 29. թ. 566:

Կոնդակ պ. պ. Պաղտասար Գէորգեանին, Վարդան Գրիգորեանին եւ Խաչատուր Բարայեանին Հ. Նախիջևանու Շխմահմատ զիւղի Հայոց ծխական դպրոցի նոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելու համար: Օգոստոսի 29. թ. 567:

Կոնդակ յանուն եւ ի պատասխանի խմբադրութեան Պ. Յովհաննու Յովհաննանց Գրիգոր Եպիսկոպոս Աղափիթեանցին Տիֆիսու Մարիամեան Յովհաննան օմիրգական գարժարանի Հոգաբարձութեան խորհրդաբանի նախադան նշանակելոյ համար: Սեպտ. 25. թ. 408:

Ենորհաւորական գրութիւն եւ պատասխանի օտարադաւան ազգաց հոգեւոր գործոց, սուրհանդակականի եւ հեռագրական վարչութեանց Վահեմ. Նախարար Մակովին: Սեպտ. 25. թ. 410:

Կոնդակ Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց Առաջնորդ Գրիգորիս Արքեպիս-

կոպոսի անունով, որով տարիս է նորան լիազօր իրաւունք եւ իշխանութիւն արժանայիշտակ բաթալիացի պ. Մանուկ Յորդանանեանի կտակի եւ կուտկաւանդ գումարի վերայ նորա 1873 նուականին հաստատւած եւ աւանդած կտակի տրամադրութեանց եւ պարտաւորութեանց համաձայն, պատուիրելով միանդամայն առնուլ այժմեան կտակակատարներից Ասպահանու Հայոց դպրոցների անունով կտակած գումարը եւ բոլոր հաշիւները վաւերական եւ օրինական կարգով յիշեալ կտակի համաձայն եւ նոր հոգաբարձուներ հաստատելով՝ արդիւնաւորել կտակարարի կամքը: Սեպտ. 26. թ. 44:

Կոնդակ Բաթալիացի հանգուցեալ Մանուկ Յորդանանեանի կտակակատար պ. պ. Բաթալիացի Ռէյնուտ Վլինջու եւ Յովհաննէս Յարութիւնեանի անունով Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց Առաջնորդ Գրիգորիս Արքեպիսկոպոսին նոցա ինդարագրութեան համաձայն լիազօր փոխանորդ կարգելոյ համար, որպէս զի նորին սրբազնութիւնը յիշեալ Յորդանանեանցից Ասպահանու Հայոց ժառանգաւորաց վարժարանի եւ օրիորդական դպրոցի անունով կտակած Հայոց Հայութ Քեց Հորիւթ Քառական Հայոց Հայութ Հայութ Հայութ Հայութ գումարը եւ հաշիւները ստանայ եւ արդիւնաւորէ կտակի տրամադրութեանց համաձայն: Սեպտ. 26. թ. 442:

Մեծ Կոնդակ պատուիրանի, Էջմիածնական կալուածի—Օշական զիւղի հայոց ժողովրդականաց անունով, որով սահմանումէ ամենայն տարի հոկտեմբերի մետառաներորդ օրը կտատարել Ս. Մէսրովք վարդապետի անունով նոյն զիւղում նորոգ կառուցեալ Եկեղեցւոյ օժման տօնը եւ յիշատակը. իսկ Եկեղեցւոյ քահանայից կանոնագրումէ, որ ամենայն կիւրակէ պատարազցից յետոյ ժաղովրդեան հոգեւոր միաթարւթեան համեն թաւաշաննիստ կատարեն այն նորակերտ Ս. Խաչովք, որի մէջ ամփոփուեցան հին Եկեղեցին քանդելու ժամանակ նորա որմանց մէջ զանուած սրբոց մասունքները: Հոկտեմբերի 2. թ. 425:

Կոնդակ Սահակ քահանայ Յօնանեանցին, պ. պ. Յարութիւն Սարգսեանցին, Մկրտիչ Աթաքէկեանցին եւ Յակոբ Սահակեանցին Շամախւոյ Սաղիան զիւղի Հայոց ծխական դպրոցի հոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելու եւ նախկին հոգաբարձուաց օրնելու համար: Հոկտեմբերի 3. թ. 427:

Կոնդակ օրհնութեան յանուն եւ ի պատասխանի զրութեան թելաւեցի Յովհաննէս Ստեփանեանի, որով գովումէ նորա աշխատութիւնը թելաւի Հոգ. ծխական դպրոցը եւ նորա նիւթապէս սպահովութեան համար կրպակները շինելու մասին: Հոկտեմբ. 5. թ. 428:

Կոնդակ օրհնութեան Շուշեցի բարեկ. Համազատպ քահանայի 8. Աւետիքեան Գէորգեան Ճեմարանի մատենադարանին տասն եւ չորս մեռազիր գրեանք նուիրելուն համար: Հոկ. 5. թ. 429:

Կոնդակ օրհնութեան Շուշեցի վիճակի Գաշրուկախ զիւղացի պ. Յովսէփ Գոյարեանցի անունով նոյն զիւղի դպրոցի շինութեանը հորէ-բորէլէ նուիրելուն համար: Սեպտ. 46. թ. 596:

Կոնդակ օրհնութեան եւ շնորհակալութեան Ներքին զործոց նախարար Վահեմ Կոստ Լոռու Մելիքեանցին. Սրբոյն Անդրէի մեծ շքանշոնը ստանալուն համար: Հոկտ. 5. թ. 453:

և ունդակի յանուն եւ ի պատասխանի գրութեան երբեմն թէհրանու դեսպանաս ան Առուսական եկեղեցւոյ վանահայր Բնոփրիոս Արեջայի, որով զօնանակութիւն յայտնելով մի պարսկագործ ցոււկ նուիրելուն համար միանդամայն իբրեւ Կը Հայրապետական միրոյ եւ օրմնութեան յիշաակ շնորհումէ Նորան մի հատ ուկի մինէադործ եւ պատկերազարդ տուփ: Սեպտ. 20. թ. 445:

Կոնդակ յանուն եւ ի պատասխանի Կովկասեանց Աղափիրեանց, որով կարդումէ նորան Տիմիամ Մարիամնամ Յովնանեան օքորդաց վարժարանի հոգաբարձութեան խորհրդաբանի նախադահութեան պաշտօնի մէջ: Սեպտ. 25. թ. 409:

Կոնդակ յանուն եւ ի պատասխանի Կովկասեան արրունական դպրոցաց հոգաբարձու Պ. Խանովմկեոյ, որով փոխանակումէ նորան շնորհակալութիւն Կովկասեան ուսումնարանական շրջանի յիշաատակարանը եւ ուսումնարանաց քարտէզը ուղարկելուն համար: Հոկտ. 44. թ. 446:

Ա. ԷջՄԻԱՆՆԻ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐ.

Ի 15 Օգոստոսի 1880 ամի. Համաձայն մակագրութեան Ա. Եհշափառ Աաթուղիկոսի ամենայն Հայոց ի վերոյ հրաժարագրոյ փոխանորդի Գորւայ բարեշնորհ Գրիգոր Ա. արդապետի Գառնակերեանց փոխազրիլ զնա ի պաշտօն փոխանորդութեան Հին—Նախիջևանու, իսկ Հոգեւոր Կառավարութեան Գորւայ պատուիրիլ յետ ստանալոյ ի յիշեալ Գրիգոր վարդապետէ զամենայն պաշտօնական գործս և զհաշիւս սպասել առանձին տնօրէնութեան Աինօգի:

Ի 15 Սեպտ. 1880 ամի. Արովչեակ Գերապ. Անգրէաս Արքեպիսկոպոսն Տեսուչն Գ. Ճեմարանի Մայր Եթոռոյս արդէն հաստատեալ է ի պաշտօն Առաջնորդութեան թեմին Երցախու, ուստի ըստ հրամանի Ա. Եհշափառ Հոյրապետի Ազգիս հրամանազրիլ թեմական Ատենի Հայոց Երցախոյ, սկսեալ ի 1էն Սեպտ. տարւոյս յամենայն հարկաւոր գէպս դիմել առ նորին Գերապատւութիւնն իբրև առ թեմակալ Առաջնորդ և Ատենապետ նորին ի խնդիրս կարեւոր մինչ ցառանձին տնօրէնութիւն Վեհափառ Հայրապետի Ազգիս. իսկ զբարեշնորհ Արիստակէս Վարդապետն Սեղրակեան, որ կարգեալ է ի պաշտօն ուսուցչութեան Գէորգեան Ճեմարանի, համարել արձակեալ ի փոխանորդական պաշտօնէ:

Ի 19 Սեպտ. 1880. Ընկալեալ ի յարդանս զինզիր Տեսչի Գայիհանեան Օրիորդական միջնակալգ ուսումնարանի Հայոց Երևանայ Յովսէփ Աւագ քահանայի Մելեանց, մանաւանդ ունելով ի նկատի զնուազութիւն արգեանց նորին, հրամանազրել Կոնսիստորիային Երևանայ պարտաւորել զերեցիսանն Ա. Պետրոս և Պողոս Եկեղեցւոյն Երևան քաղաքի տալ վարչութեան յիշեալ ուսումնարանի, յետ կարի ինայողաբար ծախուցն, զարդիւնս յաւելեալս ի տարեկան ծախուց յիշեալ Եկեղեցւոյն մինչ զբարւոքում դրութեան տնտեսական մասին նորին. մանաւանդ՝ զի այնու մարմացին բանալ ի նմին չորորդ դասարան ի պէտս դաստիարակութեան և յառաջազիմութեան սանուց նորին: